եպիսկոպոսի կարկառոյ. և ի կնքտուք զնացաք ի վէհրէտէնցն և նշան օրհնեցաք յեկեղեցին մեր վասն Ոզիտայի։ Եւ յետ սմին զնացաք յԱստուածածին մօտ առ վարդապետն Իգնատիոս և երեկոյիս եկաք։

Բշի օրս (25 Յունուար) ըռամազան բռնեցին Տաճկունքն։

Գշի օրս (26 Յունուար) զորդի Ալաճաճի[1]) Գրիգորին՝ անուն նմին Ռըստազէս, որ ուրացուցին զնա բազում չարչարանօք յակամայ, վասն զի ընդ Տաճկունսն յոյժ հակաճառէր նստեալ ի մէջ շուկային և երբեմն երբեմն անարգէր զհաւատս նոցա եւս բազում բանիւ. այլ դրացիքն խրատէին զնա և ոչ անսայր, և նոքա ևս երբեմն թոյլ տային որպէս թէ ոչ լըւաք։ Այլ սա արհեստ արարեալ իւրն՝ հանապազ զայն առնէր. և ըմբռնեալ և վկայք կացուցեալ թէ Անարգեաց զօրէնս մեր և զպատգամաբերն. մինչև բազում ամբոխ կուտեալ ի վերայ նորա՝ եթէ տարցեն զնա առ բռնաւորն մեծ. եթէ ուրասցի՝ փրկեսցեն և եթէ ոչ՝ սպանցեն։ Եւ զայս տեսեալ Հայոցս ազգի, նմին ևս սիրելեացն՝ ծածկաբար երթեալ, բազում փողս խաղացուցեալ դատախազիցն եւ վկայիցն, շատ ջանիւ փրկեցին զնա յայնմ վտանգէն, փախուցանելով զնա յերկիրս յայլ անծանօթ։ Եւ յետ ժամանակաց յայլ կերպարանաւ եկն ի քաղաքս. ծանեան զնա արքն որ ունէին զաւ ընդ նմա՝ պահելով ոխս ի սրտի, և կալեալ զնա պինդ, այնչափ մինչև զնա ուրացուցեալ հանին ի հաւատոցս Քրիստոսի։ Եւ գրեցին ըռոճիկս նմա ի թագաւորէն, մեծացուցանելով զնա և ծառայ առնելով թագաւորին։ Բայց նա ի թաքստի արտասուօք անցուցանէր զժամանակն եւ զթողուլ տանն եւ տղայոցն մորմոքէր աղիքն և զմարտիրոսանալն ցանկայր և ի տան-

1) ալաճի.